

Տեղեկատվություն

«Դիլիջան» ԱՊ » ՊՈԱԿ-ի 2016թ-ի սեպտեմբեր ամսին կատարված աշխատանքները

«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի 2016թ-ի Աշխատանքային Պլան-Ծրագրով նախատեսված աշխատանքներից սեպտեմբեր ամսում կազմակերպության բաժիններում կատարվել են հետևյալ աշխատանքները.

Պահպանության բաժնի աշխատակիցների կողմից <<Դիլիջան>> ազգային պարկի տարածքում սեպտեմբեր ամսին հայտնաբերվել է ապօրինի հատված 35 ծառ, որոնց համար կազմվել է 7 անտառխախտման արձանագրություն, որոնք ուղարկվել են Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության Տավուշի տարածքային բաժին: Սեպտեմբեր ամսին իրականացվել են <<Շամախյան տեղամաս>> մասնաճյուղի 3-րդ պահաբաժնի 11 քառակուսում ` 1 կմ հանքայնացված շերտի խնամքի , 2-րդ պահաբաժնի թիվ 9 , 10 քառակուսիներում 1 կմ հանքայնացված շերտի կառուցման, իսկ <<Աղավնավանք տեղամաս>> մասնաճյուղի 2-րդ պահաբաժնի 5-րդ քառակուսում ` 1 հատ հակահրդեհային նշանակության ջրավազանի վերանորոգման աշխատանքներ:

Գիտական բաժնի աշխատակիցների կողմից սեպտեմբեր ամսին կատարվել է <<Դիլիջան>> ազգային պարկի տարածքում արծաթափայլ եղևնու սերմերի հավաքում: Վայրի պտղատուների և հիմնական ծառատեսակների ուսումնասիրություն:

<< Դիլիջան >> ԱՊ-ի տարածքի վայրի անտառկատվի ուսումնասիրություններ և քարտադարանի կազմում:

Էկոտուրիզմի և ռեկրեացիայի բաժնի աշխատակցի կողմից սեպտեմբեր ամսին իրականացվել է աղբահանության, երթուղիների և հանգստի գոտիների գրավչության պահպանման աշխատանքներ: